Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

Տարեկան

Առարկան Հայոց պատմություն

Դասարան VIII

Ժամաքանակ 68

Ուսուցիչ Հարտուհի Սարգսյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Թեմատիկ պլանավորում
«Հայոց պատմություն»
8-րդ դասարան
Շաբաթական 2 ժամ
Տարեկան 68 ժամ

Դասագրքի հեղինակներ՝

Հայոց պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար /Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան, Հակոբ Մուրադյան/ Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2018 թ.

Ներածություն		
Նպատակ		Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 8-րդ դասարանի բովանդակային հիմնական նյութի, հայոց պատմության Նոր շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • Ընդհանուր գծերով ներկայացնել 7-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բովանդակությունը, • Թվարկել Հայոց պատմության Նոր շրջանի առանցքային փաստերը, իրադարձությունները, գործիչներին, ազատագրական պայքարի և մշակութային կյանքի կարևոր կենտրոնները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/1/	3-4	Ներածություն
Բաժին 1 **Հայաստանը XVIIդարի երկրորդ կեսից մինչև XIXդարի առաջին կես** **16 ժամ**		
Գլուխ I. **Ազատագրական պայքարի նոր փուլը** **Ազատագրական պայքարի նոր փուլը 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում** **/7 ժամ/**		
Նպատակ		Նպաստել 17-րդ դ. երկրորդ կեսի և 18-րդ դարի ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևոր փաստերը, իրադարձությունները և պայքարի հայտնի գործիչների գործունեությունը բնութագրելու, բացատրելու, համեմատելու, արժորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնաարդյունք	**Կարողանա՝** • Ներկայացնել Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարի աշխուժացման սկիզբը 17-րդ դարի 2-րդ կեսին • Թվարկել հայտնի գործիչների անուններ, նրանց կողմից իրականացված ազատագրական պայքարի ծրագրի որոշ դրույթներ • Ներկայացնել Արցախի ազատագրական պայքարի գլխավոր գործիչներին, նշանավոր պատմական իրադարձությունները • բացատրել սղնախ եզրույթը • Ներկայացնել Սյունիքում ազատագրական պայքարի պայքարի գլխավոր գործիչներին, նշանավոր ճակատամարտերը • Բնութագրել Հալիձորի ճակատամարտը • Բացատրել Խամսայի մելիքության նշանակությունը • Բացատրել գաղութահայ կենտրոնների դերը հայապահպանման գործում: • Ներկայացնել Հովսեփ Էմինի գործունեությունը • Ներկայացնել հայտնի գործիչների կողմից կազմած ծրագրերի որոշ դրույթներ • Բացատրել և արժևորել ազատագրական պայքարի անհրաժեշտությունը

Ժամ	**էջ**	**Դաս**
1/2/	6-10	Դաս 1 «Հայ ազատագրական պայքարի վերելքը»:
1/3/	6-10	Դաս 1 «Հայ ազատագրական պայքարի վերելքը»:
1/4/	11-15	Դաս 2. «Զինված պայքարը Արցախում»:
1/5/	16 -19	Դաս 3. «Զինված պայքարը Սյունիքում»:
1/6/	20 - 23	Դաս 4. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Հայկական ինքնավարությունն Արցախում: Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները/:
1/7/	24 - 27	Դաս 5. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը/:
1/8/	24 - 27	Դաս 5. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը/:

Գլուխ II
Հայաստանը XIX դարի առաջին կեսին/9 ժամ/

Նպատակ	Նպաստել **XIX** դարի սկզբին Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական կացության, վարչական կյանքի մասին գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները, գործիչներին և նրանց հետ կապված փաստերը, ժամանակաշրջանին բնորոշ որոշ հասկացությունները բացատրելու, համեմատելու, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցնելու իրողությունը տեսակետ հայտնելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել Արևելյան Հայաստանի վարչա-քաղաքական սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված կարևոր փաստեր • բացատրել խանություններ, մահալներ, միրբոլուքներ, քալանթարներ հասկացությունները • ներկայացնել 1826-1828թթ ռուս-պարսկական պատերազմի որոշ նշանավոր դրվագներ, • թվարկել հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ կապված նշանավոր մեկ կամ երկու գործիչների անուններ, • առանձնացնել Թուրքմենչայի պայմանագրի հիմնական դրույթները: • ներկայացնել և բացատրել Արևելյան Հայաստանում 1828 թ-ից հետո Ռուսական վարչաձևի հաստատման կարևոր փաստեր • բացատրել Հայկական մարզ, եկեղեցական կանոնադրություն հասկացությունները: • ներկայացնել և բացատրել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, հասարակական քաղաքական կյանքի հետ կապված կարևոր փաստեր • բացատրել վիլայեթ /փաշայություն/, սանջակ /գավառ/, էնաֆություն և ռայա հասկացությունները, • թվարկել տվյալ ժամանակաշրջանի գործիչների անուններ

Ժամ	**Էջ**	**Դաս**
1/9/	28-30	Դաս 6 «Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին»
1/10/	31-35	Դաս 7. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր փուլը»:
1/11/	31-35	Դաս 7. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր փուլը»:
1/12/	36-38	Դաս 8. «Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում»:

1/13/	39-42	Դաս 9. «Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին»:
1/14/	39-42	Դաս 9. «Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին»:
1/15/		**Կրկնություն**
1/16/		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
Գլուխ III Հայ մշակույթը նոր շրջանի առաջին փուլում /«Զանգակ»/ /3 ժամ/		
Նպատակ		Նպաստել XVII-XIX դարերի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների,կրթական հաստատությունների, նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և գարվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • Ներկայացնել XIX դդ առաջին կեսի մշակութային կյանքի հիմնական կենտրոնները: • Ներկայացնել և բացատրել ժամանակաշրջանի կրթական համակարգի վերաբերյալ կարևոր փաստերը: • թվարկել XVII- XIX դդ առաջին կեսերին բացված հայկական դպրոցները: • Ներկայացնել և բնութագրել Արևելյան Հայաստանում բացված առաջին տպարանի մասին փաստեր • Ներկայցնել հայկական առաջին ամսագիրը: • Արժևորել տպագրության դերը • թվարկել XVII- XIX դդ առաջին կեսի մշակույթի նշանավոր կենտրոններ, գործիչների անուններ: • արժևորել ժամանակաշրջանի մշակութային ձեռքբերումները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/17/	43-45	Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը»
1/18/	45-46	Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը»
1/19/	47-50	Դաս 11 «Գիտությունը և արվեստը»
1/20/	**Կրկնություն**	
1/21/	**Գործնական աշխատանք**	
Բաժին II /34 ժամ/ Հայաստանը XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին		
Գլուխ IV Հայաստանը Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների կազմում /3 ժամ/		

Նպատակ	Նպաստել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները և փաստերը բացատրելու կարողությունների զարգացմանը::
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • քարտեզի վրա ցույց տալ Արևելյան և Արևմտյան Հայաստանը • ներկայացնել և բացատրել ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի դրության վերաբերյալ որոշ փաստեր: • ներկայացնել և բացատրել Արևմտյան Հայաստանի դրության վերաբերյալ որոշ փաստեր • պարզաբանել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի որոշ առանձնահատկություններ

	Էջ	Դաս
1/22/	54-58	Դաս 12 «Արևելյան Հայաստանի դրությունը»
1/23/	54-58	Դաս 12 «Արևելյան Հայաստանի դրությունը»
1/24/	59-63	Դաս 13 «Արևմտահայերի դրությունը»

Գլուխ 5
Հայ ազգային - հասարակական շարժումները:
/3 ժամ/

Նպատակ	Նպաստել Հայ ազգային - հասարակական շարժումների մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունությունը համեմատելու, բացատրելու, վերլուծելու, արժևորելու, դիրքորոշում արտահայտելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունք	**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել հայ հասարական - քաղաքական մտքի նշանավոր գործիչների գործունեությունը և նրանց հետ կապված կարևորագույն փաստերը • համեմատել հասարական քաղաքական տարբեր հոսանքները: • թվարկել «Ազգային սահմանադրություն» անվանումը ստացած կանոնադրության հեղինակներին • ներկայացնել և բացատրել Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը,«Ազգային սահմանադրություն»ը

Ժամ	էջ	Դաս
1/25/	64 - 67	Դաս 14. «Հասարակական -քաղաքական միտքը»:
1/26/	68 - 72	Դաս 15. «Արևմտահայերի ազգային կյանքի երկու նշանավոր շրջադարձերը»:
1/27/	68 - 72	Դաս 15. «Արևմտահայերի ազգային կյանքի երկու նշանավոր շրջադարձերը»:
Գլուխ 6. Հայկական Հարցի միջազգայնացումը /3 ժամ/		
Նպատակ		Նպաստել ռուս-թուրքական 1877 – 1878 թթ. պատերազմի և Հայկական Հարցի միջազգայնացման և ունեցած հետևանքների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, պատերազմող կողմերի նպատակների, Հայկական Հարցի ծագման և միջազգայնացման գործընթացի, պայմանագրերի և տվյալ ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնաարդյունք		**Կարողանա՝** • թվարկել 1877 – 1878 թթ. պատերազմի կարևորագույն իրադարձությունները. • բացատրել պատերազմող կողմերի նպատակները • ներկայացնել Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքման և Բեռլինի վեհաժողովի հրավիրման տարեթվերը: • համեմատել Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի՝ հայերի համար ունեցած նշանակությունը: • բացատրել Հայկական Հարցի միջազգայնացման հետևանքները
ժամ	**էջ**	**Դաս**
1/28/	73 - 74	Դաս 16. «Ռուս-թուրքական 1877 - 1878թթ պատերազմը և Հայաստանը»:
1/29/	74-75	Դաս 16. «Ռուս-թուրքական 1877 - 1878թթ պատերազմը և Հայաստանը»:
1/30/		**Կրկնություն**
1/31/	76 – 79	Դաս 17. «Հայկական Հարցի միջազգայնացումը»:
1/32/	76 – 79	Դաս 17. «Հայկական Հարցի միջազգայնացումը»:

Գլուխ VII /«Զանգակ»/ Ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-90-ական թվականներին /5 ժամ/		
Նպատակ		Նպաստել 19-րդ դարի 70-90-ական թթ. ազգային ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազատագրական պայքարի հետ կապված կարևոր փաստերը, կենտրոնները, գործիչների գործունեությունը, կարևորագույն դրվագները բացատրելու, համեմատելու, գնահատելու, դիրքորոշում հայտնելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքը		**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել ազատագրական շարժման վերելքի պատճառները, խմբակների և կազմակերպությունների հետ կապված կարևոր փաստերը • Ներկայացնել և բացատրել կուսակցությունների ծրագրերի հիմնական դրույթները • Ներկայացնել և բացատրել հայդուկային շարժան սկիզբը և նշանավոր հայդուկների • Ներկայացնել և բացատրել 1890-ական արևմտահայության բնաջնջման կարևոր փաստերը • Թվարկել և բացատրել 1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերը
Ժամ	**Էջ**	Դաս
1/33/	80-82	Դաս-18.«Ազատագրական խմբակները և կազմակերպությունները»
1/34/	83-87	Դաս-19. «Հայ ազգային կուսակցությունները»
1/35/	88-91	Դաս-20 Հայդուկային շարժումը
1/36/	92-94	Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը.Դիմադրական մարտերը 1890-ական թվականներին.
1/37/	94-96	Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը. Դիմադրական մարտերը 1890-ական թթ.(Սասունի և Զեյթունի հերոսամարտերը, Պաշտպանական կռիվները Վանում)

1/38/	**Կրկնություն**	
Գլուխ 8. Ազգային շարժումների ծավալումը 20-րդ դարասկզբին /«Զանգակ»/ /5 ժամ/		
Նպատակ	Նպաստել 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը,տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը, կարևոր հասկացությունները բացատրելու, վերլուծելու, համեմատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:	
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • Ներկայացնել Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած կարևորագույն փաստերը, իրադարձությունները • Թվարկել հայ ֆիդայական շարժման գործիչների և ապստամբության օջախները: • Ներկայացնել Ցարական կառավարության հրապարակած հակահայկական օրենքը • Բացատրել «հայ-թաթարական ընդհարումներ» հասկացությունը • Թվարկել ինքնապաշտպանական մարտերի ղեկավար գործիչների • Ներկայացնել և բացատրել Երիտթուրքերի հեղաշրջումը, 1912-1914 թթ. Հայկական հարցի վերաբացումը, Կիլիկիայի կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, ռուս-թուրքական համաձայնագիրը:	
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/39/	97-102	Դաս 22. Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում
1/40/	102-106	Դաս 23. Համազգային պայքարի վերելքը
1/41/	102-106	Դաս 23. Համազգային պայքարի վերելքը
1/42/	106-112	Դաս 24 Արևմտահայությունը Առաջին աշխարահամարտի նախօրեին
1/43/	106-112	Դաս 24 Արևմտահայությունը Առաջին աշխարահամարտի նախօրեին
1/44/		**Կրկնություն**
Գլուխ 9. Հայաստանը և Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: /«Զանգակ»/ /11 ժամ/		

Նպատակ	Նպաստել Առաջին աշխարհամարտի, դրանում հայ ժողովրդի մասնակցության, Հայոց մեծ եղեռնի և ինքնապաշտպանական մարտերի, հայության նյութական և մարդկային կորուստների, Ռուսաստանյան հեղափոխությունների ժամանակ հայ ժողովրդի դրության, Մայիսյան հերոսամարտերի մասին գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր իրադարձությունները բացատրելու, համեմատելու, դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • Բացատրել Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակը. • Թվարկել Կովկասյան ճակատի կարևոր իրադարձությունները • Բացատրել և արժևորել կամավորական ջոկատների ստեղծումն ու գործունեությունը: • Ներկայացնել և բացատրել Մեծ եղեռնի հիմնական պատճառները, փուլերը • Բացատրել «Ցեղասպանություն» հասկացությունը • ներկայացնել և բացատրել 1915 թ ինքնապաշտպանական մարտերի կարևոր փաստեր • Թվարկել ինքնապաշտպանական մարտերի նշանավոր գործիչների • Ներկայացնել և բացատրել իրադրությունն Անդրկովկասում և Հայաստանում Փետրվարյան հեղափոխության շրջանում • Ներկայացնել և բացատրել իրադրությունն Անդրկովկասում և Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում • Ներկայացնել և բացատրել Հայկական զորամիավորումների ստեղծումը, Անդրկովկասի անկախացման գործընթացը • Ներկայացնել, բացատրել և արժևորել մայիսյան հերոսամարտերի կարևորագույն փաստերը • Թվարկել Մայիսյան հերոսամարտերի նշանավոր գործիչներին

Ժամ	**էջ**	**Դաս**
1/45/	112 - 116	§ 25. «Համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը»:
1/46/	117 - 120	§ 26. «Հայ կամավորական շարժումը»:
1/47/	122 - 129	Դաս 27. «Հայոց Մեծ եղեռնը»
1/48/	122 - 129	Դաս 27. «Հայոց Մեծ եղեռնը»
1/49/	129 – 134	Դաս 28 .«1915 թվականի հերոսամարտերը»

1/50/	129 - 134	Դաս 28 .«1915 թվականի հերոսամարտերը»
1/51/		**Գործնական աշխատանք**
1/52/	134-137	Դաս 29. «Ազգային –քաղաքական կյանքի վերելքը 1917թ.»
1/53/	138-141	Դաս 30. «Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը»
1/54/	142-145	Դաս-31. «Ռազմաքաղաքական իրավիճակը և Անդրկովկասի անկախացումը»
1/55/	146-152	Դաս-32. «Մայիսյան փառահեղ հերոսամարտերը»
1/56/	146-152	Դաս-32. «Մայիսյան փառահեղ հերոսամարտերը»
1/57/	**Կրկնություն**	
1/58/	**Թեմատիկ գրավոր աշխատանք**	
Գլուխ X / «Զանգակ» / Հայկական մշակույթը նոր շրջանի երկրորդ փուլում /4 ժամ/		
Նպատակ	Նպաստել XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. ընկած ժամանակաշրջանի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների, կրթական հաստատությունների նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և արվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:	

Վերջնարդյունքներ	**Կարողնա՝** • ներկայացնել և բացատրել նոր շրջանի երկրորդ փուլի հայկական մշակույթի կարևորագույն փաստերը: • բացատրել մշակույթի վերելքի պատճառները: • ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի գիտության զարգացման վերաբերյալ փաստեր, նշանավոր գործիչների • արժևորել ժամանակաշրջանի բնական գիտությունների և հայագիտության ձեռքբերումները • ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի գրականության, հայ մամուլի ձեռքբերումները, նշանավոր գործիչների: • թվարկել պարբերականները • ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի արվեստի (կերպարվեստ, թատրոն) ձեռքբերումները և նշանավոր գործիչների: • ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի արվեստի (երաժշտություն, ճարտարապետություն) ձեռքբերումները և նշանավոր գործիչների:

Ժամ	**Էջ**	**Դաս**
1/59/	153-156	Դաս 33 «Մշակույթի վերելքը: Կրթությունը»
1/60/	157-159	Դաս 34 «Գիտության զարգացումը»
1/61/	160-163	Դաս 35 «Գրականությունը և մամուլը»
1/62/	164-165	Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը»
1/63/	**Կրկնություն**	

Բաժին III
Հայկական գաղութները Նոր շրջանում /«Զանգակ»/
/2 ժամ/

Գլուխ XI Ազգային կյանքի կազմակերպումը և մշակույթի զարգացումը /«Զանգակ»/
Հայկական գաղօջախները Նոր շրջանում /«Մանմար»/
/2 ժամ/

Նպատակ	Նպաստել Նոր շրջանի հայկական գաղթավայրերի գիտելիքների ձեռք բերմանը, առաջացման ժամանակաշրջանները, գաղութահայ կենտրոնները և գործիչներին, գաղթավայրերի կյանքին վերաբերող կարևոր դրվագները և իրադարձությունները, գաղութների բացատրելու, համեմատելու, գնահատելու, գաղթավայրերի դերը հայապահպանության գործում արժևորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ		Կարողանա՝ • ներկայացնել և բացատրել XVII- XX դարի սկզբի հայկական գաղութների առաջացման ժամանակագրական շրջանակները։ • բացատրել «գաղութ», «համայնք», հասկացությունները: • ներկայացնել և բացատրել ազգային-քաղաքկան կյանքի կազմակերպման որաշ առանձնահատկություններ: • թվարկել համազգային կառույցները կամ կազմակերպությունները։
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/64/	170-172	Դաս 37. «Հիմնական գաղթավայրերը և խոշոր համայնքները»:
1/65/	172-173	Դաս 37. «Հիմնական գաղթավայրերը և խոշոր համայնքները»:
1/66/	174-176	Դաս 38 «Գաղթավայրերի դերը հայապահպանության գործում»:
1/67/	176-178	Դաս 38 «Գաղթավայրերի դերը հայապահպանության գործում»:
1/68/	**Կրկնություն**	

Թեմատիկ աշխատանքներն ուսուցիչն՝ իր հայեցողությամբ, կարող է հանձնարարել թեմաներից հետո կրկնության համար նախատեսված ժամերի հաշվին։
Գործնական աշխատանքների հարցում ուսուցիչն ավելի ազատ է, դրանք կարող է հանձնարարել ցանկացած ժամի ընթացքում, կրկնության ժամերին կամ տանը:
Կիսամյակային աշխատանքները՝ կիսամյակի ավարտին, անհրաժեշտության դեպքում, տեղաշարժելով ամփոփիչ կրկնության կամ կրկնության համար նախատեսված ժամերը:

1. Ներածություն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում Հայոց պատմության Նոր շրջանը:
2. Որո՞նք են Նոր շրջանի ազատագրական պայքարի և մշակութային կյանքի հիմնական կենտրոնները:
3. Ովքե՞ր են Հայոց պատմության XVIII-XIX դարերի ազատագրական պայքարի նշանավոր գործիչները:
4. XX դարի սկզբին համաշխարհային որ իրադարձության ընթացքում և որ պետության կողմից է իրականացվել Հայոց Մեծ Եղեռնը:
5. Հայոց Մեծ Եղեռնից հետո ո՞ր իրադարձությունները հնարավոր դարձրեցին հայոց անկախ պետականության ծնունդը։

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց պատմության Նոր շրջանը ընդգրկում է XVII դարի կեսերից մինչև XX դարի սկիզբը / մինչև 1918թ./
2. Հայոց պատոմության Նոր շրջանի մշակույթի զարգացման կարևոր կենտրոններն էին Թիֆլիսը և Կոստանդնուպոլիսը:
3. Հայոց Մեծ Եղեռնը իրականացվել է Օսմանյան Թուրքիայի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:
4. Հայոց Մեծ եղեռնից հետո հայոց պետականությունը ծնունդ առավ 1918 թ. մայիսի 28-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել XVIII -XIX դարերում ազատագրական պայքարի հիմնական կենտրոնները. Արցախ, Սյունիք, Զեյթուն, Սասուն և այլն /Թվարկել առնվազն երկուսը։/
2. Թվարկել ազատագրական պայքարի և ֆիդայական շարժման առնվազն 2 նշանավոր գործչի անուն

- XVIII -XIX դարերի ազատագրական պայքարի գործիչներին. Իսրայել Օրի, Դավիթ Բեկ, Եսայի Հասան Ջալալյան, Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան,
- ֆիդայական շարժման նշանավոր գործիչներին. Արաբո, Աղբյուր Սերոբ, Անդրանիկ Օզանյան, Գևորգ Չավուշ, Հրայր Դժոխք, Քեռի:

3. Բացատրել, որ հայոց պետականության ծնունդը հնարավոր եղավ Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ / Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա/Ж

Գլուխ/ Թեմա I.

Ազատագրական պայքարի նոր փուլը

Ազատագրական պայքարի նոր փուլը 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում

Դաս 1. Ազատագրական պայքարի վերելքը «Զանգակ»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է ազատագրական պայքարը թևակոխել վերելքի փուլ։ Նշել պայքարի աշխուժացման մեկ պատճառ:
2. Հայտնի ի՞նչ գործիչներ գիտեք, նշել մեկ-երկու անուն:
3. Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հրավիրվել Էջմիածնի գաղտնի ժողովը։
4. Ի՞նչ գիտեք Իսրայել Օրու մասին:
5. Ինչպե՞ս է կոչվում Իսրայել Օրու կողմից ներկայացված ծրագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ազատագրական պայքարը վերելքի փուլ է թևակոխել 17-րդ դարի 2-րդ կեսին:
2. Էջմիածնի գաղտնի ժողովը հրավիրվել է 1677 թ. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից:
3. Օրու ներկայացրած ծրագիրը կոչվում է <<Պֆալցյան >> ծրագիր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել, ազատագրական պայքարի աշխուժացման պատճառները.

- Հայաստանի ազատագրության գաղափարի շուրջ միավորվեցին հայ ժաղավրդի բոլոր հատվածները՝ թե՛ հայրենիքում, թե՛ գաղթօջախներում:
- կայսրության և Սեֆյան Պարսկաստանի թուլացումը /Թվարկել առնվազն 1 պատճառ:/
2. Թվարկել ազատագրական պայքարի հայտնի գործիչների / Հակոբ Ջուղայեցի, Մահտեսի Շահմուրատ, Իսրայել Օրի/ /Թվարկել առնվազն 2 գործչի անուն:/

Դաս 2. Զինված պայքարը Արցախում «Զանգակ»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է նշանակում սղնախ:
2. Ո՞ր վայրերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության:
3. Ո՞վ է Եսայի Հասան-Ջալալյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սղնախները պաշտպանական ամրոցեր էին:
2. Ինքնապաշտպանական մարտեր տեղի են ունեցել Երևանում և Վարանդայում:
3. Եսայի Հասան –Ջալալյանը Գանձասարի կաթողիկոսն էր, ով գլխավորել է զինված պայքարը Արցախում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել առնվազն 2 սղնախի անուն. (Գյուլիստանի, Շոշի, Ավետարանոցի, Ջրաբերդի, Քարագլխի)
2. Ներկայացնել Երևանում և Վարանդայում տեղի ունեցած իրադարձություններից որոշ կարևոր դրվագներ
3. Քարտեզի վրա ցույց տալ ինքնապաշտպանական մարտերի վայրերը.Երևան, Վարանդա:
4. Նշել հարցի ճիշտ պատասխանը.
   Ե՞րբ անձնատուր եղավ պաշարված Երևանը.
   ա/ 1724թ. հունիսի 7 բ/1724թ. սեպտեմբերի 26
   գ/1724թ. հունիսի 12 դ/1724թ. հոկտեմերի 26

Դաս 3. Զինված պայքարը Սյունիքում <<Զանգակ>>

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրնքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Սյունիքի ազատագրական պայքարի ի՞նչ հայտնի գործիչներ գիտեք, 1722 թ ո՞վ է գլխավորել Սյունիքի ինքնապաշտպանությունը:
2. Պայքարի արդյունքում որտե՞ղ ստեղծվեց հայկական իշխանություն:
3. Ի՞նչ գործունեությունն է ծավալել Դավիթ Բեկը Սյունիքում:
4. Բնութագրել Հալիձորի ճակատամարտի որոշ դրվագներ:
5. Ի՞նչ նշանակություն ունեցավ ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սյունիքի ինքնապաշտպանությունը գլխավորել է Դավիթ Բեկը:
2. 1724 թ. Սյունիքում ստեղծվել է Հայկական իշխանություն, որի կենտրոնը Հալիձորի բերդն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել հայտնի երկու գործիչների անունները. Դավիթ բեկ, Մխիթար սպարապետ:
2. Բացատրել, որ 1722 թ. Դավիթ Բեկը հաստատվել է Սյունիքի Շինուհայր ավանում, փայլուն հաղթանակ տարել ջևանշիր կոչվող ցեղի դեմ, կարողացել է համախմբել ժողովրդի բոլոր հատվածներին, ձեռք բերել մեծ հեղինակություն և ազատագրելով Սյունիքի մեծ մասը՝ ստեղծեց հայկական իշխանություն:/ Նշել առնվազն 2 փաստ:/
3. Բնութագրել, որ 1727 թ. թշնամին պաշարում է Հալիձորի բերդը, սակայն հայերը 300 զինյալներով հանկարծակիի բերելով թշնամուն՝ նրան պատճառում են հսկայական կորուստներ և փայլուն հաղթանակ տանում:
4. Արժևորել պայքարի նշանակությունը. նպաստեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և ազատասիրական ոգու բարձրացմանը:

Դաս 4. Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ «Զանգակ» /Հայկական ինքնավարությունն Արցախում: Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները/:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Երբ է Արցախը անջատվել Գանձակի խանությունից:
2. Արցախի, ո՞ր մելիքություններն էին մտնում Խամսայի /հինգ/ մելիքության մեջ:
3. Ո՞վ է Հովսեփ Էմինը, որտեղից էր եկել Հայաստան:
4. Ո՞ր պետություններն էր Հովսեփ Էմինը համարում Հայաստանի ազատագրության իրական դաշնակից:
5. Ինչո՞ւ գաղութահայ կենտրոնները ձեռնամուխ եղան ազատագրական պայքարի կազմակերպմանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջներըկատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արցախը Գանձակի խանությունից անջատվել է 1736 թվականին:
2. Հովսեփ Էմինը Հնդկաստանից էր, և զբաղվում էր Հայաստանի ազատագրության հարցերով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք կարողանա՝

1. Թվարկել Խամսայի մելիքությունների առնվազն 2 անուն. Ջրաբերդ,Գյուլիստան,Խաչեն, Վարանդա, Դիզակ:
2. Բացատրել, որ Հովսեփ Էմինը քաջ գիտակցելով Հայաստանի ծանր վիճակը փորձում էր ազատագրական պայքար սկսել՝ ապավինելով Ռուսաստանի կամ Վրաստանի օգնությանը:

3. Արժևորել այն փաստը, որ գաղութահայ կենտրոնները ազատագրական պայքարի կազմակերպմանը ձեռնամուխ եղան, քանի որ գիտակցում էին սեփական պետություն ունենալու անհրաժեշտությունը և նշանակությունը:

Դաս 5. Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ «Զանգակ» Մաղրասի հայրենասիրական խմբակը և Հայաստանի ազատագրության ծրագրերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րտեղ և ե՞րբ ստեղծվեց Մաղրասի խմբակը:
2. Ի՞նչ էր Մ. Բաղրամյանի գրքի անվանումը և ե՞րբ է այն լույս տեսել:
3. Ի՞նչ էր Շ. Շահամիրյանի գրքի անվանումը և ե՞րբ է այն լույս տեսել:
4. Ովքե՞ր ստեղծեցին «Հյուսիսային ծրագիրը» և «Հարավային ծրագիրը»:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 18-րդ դարի երկրորդ կեսին Մաղրասում՝ Շ.Շահամիրյանի գլխավորությամբ, մի խումբ հայրենասերներ ստեղծեցին խմբակ:
2. Մ. Բաղրամյանի գիրքը կոչվում է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և լույս է տեսել 1772 թ.:
3. Շ. Շահամիրյանի գիրքը կոչվում է «Որոգայթ Փառաց» և լույս է տեսել 1773 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ «Հյուսիսային ծրագիրը» 18 հոդվածից բաղկացած նախագիծ էր: Ըստ որի Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանի թագավորն ընտրվելու էր Ռուսաստանի կայսեր կողմից:
2. Բացատրել, որ «Հարավային ծրագիրը» 20 հոդվածից բաղկացած նախագիծ էր: Ըստ որի Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
3. Լրացնել հեղինակների անունները.

Ծրագիր	Հեղինակ
«Հյուսիսային ծրագիր»	
«Հարավային ծրագիր»	

4. Թվարկել տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պայքարի առնվազն 3 նշանավոր գործչի անուն. Մ. Բաղրամյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Լազարյան, Շահամիր Շահամիրյան:

Գլուխ IV / «Զանգակ»/

Հայաստանը Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների կազմում

/2 ժամ/

Դաս 6. «Զանգակ» Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. XIX դարի սկզբին որ երկրի տիրապետության տակ էր գտնվում Արևելյան Հայաստանը և ի՞նչ վարչական բաժանման էր ենթարկված:
2. Ո՞րն էր Արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ վարչական միավորը: Ներկայացնել կառուցվածքը և կառավարումը:
3. Թվարկել Ղարաբաղի խանության կազմի մեջ Հայաստանի ո՞ր հատվածներն էին մտնում:
4. Ե՞րբ է սկսվել XIX դարի առաջին ռուս-պարսկական պատերազմը:
5. Ի՞նչ արդյունքներ ունեցավ առաջին ռուս-պարսկական պատերազմը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Արևելյան Հայստանը XIX դարի սկզբին, գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ:
2. Ամենամեծ վարչական միավորը Երևանի խանությունն էր: Երևանի խանը՝ սարդարը, նաև ամբողջ Արևելյան Հայաստանի կառավարիչներից ամենաազդեցիկն էր:
3. 19-րդ դարի առաջին ռուս պարսկական պատերազմը սկսվել է 1804 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Բացատրել, որ Արևելյան Հայաստանը բաժանված էր խանությունների, խանությունները՝ մահալների: Խանությունը ղեկավարում էր խանը՝ սարդարը, մահալը ղեկավարում էր միրբոլուք, որին նշանակում էր խանը:
2. Ներկայացնել, որ Ղարաբաղի խանության մեջ մտնում էր Սյունիքի և Արցախի զգալի մասը:
3. Բացատրել, որ ռուս-թուրքական առաջին պատերազմը ավարտվել է Գյուլիստանի հաշտության պայմանագրով և Արևելյան Հայաստանից Ռուսաստանին անցել են զգալի տարածքներ:

Դաս 7 «Զանգակ»՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր փուլը

§ 2. Ռուս-պարսկական 1826-1828 թթ պատերազմը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: «Մանմար»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ սկսվել XIX դարի ռուս-պարսկական երկրորդ պատերազմը:
2. Ներկայացնել 1826-1828 թթ. պատերազմի նշանավոր դրվագները:
3. Տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի ազատագրական պայքարի ի՞նչ նշանավոր գործիչներ գիտեք:
4. Ե՞րբ է կնքվել Թուրքմենչայի պայմանագիրը, որո՞նք էին հիմնական դրույթները:
5. Ի՞նչ նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը XIX դարում սկսվել է 1826 թ.:
2. Թուրքմենչայի պայմանագիրը կնքվել է 1828թ. փետրվարի 10-ին

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել 1826 -1828 թթ. նշանավոր իրադարձություններից առնվազն 2-ը. 1826 թ. Շուշիի պաշարումը, Շամքորի ճակատամարտը, Օշականի ճակատամարտը, 1827թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի գրավումը
2. Թվարկել տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի ազատագրական պայքարի նշանավոր առնվազն 1 գործչի անուն. Ներսես Աշտարակեցի, Հարություն Ալամդարյան, Մարտիրոս Վեքիլյան, Գրիգոր Մանուչարյան:
3. Բացատրել, որ Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, որ Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք տրվեց բնակություն հաստատել Ռուսաստանին անցած շրջաններում:
4. Արտահայտել վերաբերմունք Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցնելու պատմական իրողության նկատմամբ:

Դաս 8. **«Զանգակ»-- Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում:**

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ցարական արքունիքը ե՞րբ և ի՞նչ միավոր ստեղծեց Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից:
2. 1840-ական թթ. վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում
3. Ե՞րբ է ռուսական կառավարության կողմից հաստատվել Հայ եկեղեցու կանոնադրությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Նիկոլայ I 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի խանություններից կազմվեց Հայկական մարզ:
2. 1840 թ. վերացվեց Հայկական մարզը, 1844 թ. հիմնվեց Կովկասի փոխարքայությունը, իսկ երկու տարի անց Անդրկովկասը բաժանվեց նահանգների: 1849թ. հիմնվեց Երևանի նահանգը: /Նշել առնվազն 1 փաստ:/
3. Ցարական կառավարությունը 1836 թ. հրապարակեց եկեղեցական հատուկ կանոնադրություն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա:

1. Առանձնացնել, որ Հայկական մարզը մտնելու էր ռուսական կայսրության կազմի մեջ, ունենալու էր իր դրոշը և զինանշանը:
2. Բացատրել, որ որ հայ եկեղեցու կանոնադրությունը իրենից ներկայացնում էր մի փաստաթուղթ, որով սահմանվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները, պարտականությունները և փոխհարաբերությունները ռուսական պետության հետ:

Դաս 9. **«Զանգակ»՝ Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:**

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. XIX դարի սկզբին ո՞ր պետության տիրապետության տակ էր գտնվում Արևմտյան Հայաստանը:
2. XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանը ի՞նչ վարչական միավորների էր բաժանված և ո՞ւմ կողմից էին դրանք ղեկավարվում:
3. Արևմտյան Հայաստանի ո՞ր վարչական միավորի ղեկավարն էր ամենաազդեցիկը:
4. Ի՞նչ է նշանակում «ռայա» հասկացությունը և
5. Ե՞րբ են տեղի ունեցել XIX դարի առաջին կեսի ռուս-թուրքական պատերազմները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. XIX դարի սկզբին Արևմտյան Հայաստանը գտնվում էր Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ,
2. XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանը բաժանված էր նահանգների /վիլայեթների/, նահանգները՝ գավառների / սանջակների/:
3. XIX դարի առաջին կեսի ռուս-թուրքական պատերազմները տեղի են ունեցել 1806-1812 թթ. և 1828-1829 թթ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ ամենաազդեցիկը Էրզրումի նահանգապետ-փաշան էր, որը կրում էր սերասկյար տիտղոսը:
2. Բացատրել, որ հայ ժողովուրդը համարվում էր ռայա՝ հպատակ, իրավազուրկ: Արևմտյան Հայաստանում քրիստոնյաները զրկված էին զենք կրելու, դատարանում վկայություն տալու, ձի նստելու, շքեղ հագնվելու և տարրական այլ իրավունքներից/:

Գլուխ III / «Զանգակ» /
Հայ մշակույթը նոր շրջանի առաջին փուլում
/3 ժամ/

Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որտե՞ղ էին գտնվում XIX դ. առաջին կեսի մշակութային կյանքի հիմնական կենտրոնները:
2. XVII-XIX դդ. առաջին կեսերին հայկական ի՞նչ նշանավոր դպրոցներ գիտեք:
3. Ո՞ւմ ջանքերով է հիմնադրվել Ներսիսյան դպրոցը:
4. Ո՞ր թվականին է հիմնադրվել Լազարյան ճեմարանը:
5. Որտե՞ղ է հիմնադրվել Աղաբաբյան դպրոցը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. XIX դդ առաջին կեսի մշակութային կյանքի հիմնական կենտրոնները գտնվում էին հայկական գաղթավայրերում:
2. Ներսես Աշտարակեցու ջանքերով հիմնադրվել է Ներսիսյան դպրոցը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել XVII-XIX դդ առաջին կեսերին բացված հայկական դպրոցներից առնվազն երկուսը՝ Աղաբաբյան դպրոց, Լազարյան ճեմարան, Ներսիսյան դպրոց:
2. Նշել ճիշտ պատասխանը:

Լազարյան ճեմարանը հիմնադրվել է՝

ա. 1815 թ գ. 1810 թ

բ. 1824 թ դ. 1838 թ

3. Նշել ճիշտ պատասխանը:

Աղաբաբյան դպրոցը հիմնադրվել է՝

1. Մոսկվայում 2. Թիֆլիսում 3. Երևանում 4. Աստրախանում

Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը»_/ «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է հայկական առաջին ամսագիրը և ե՞րբ է այն լույս տեսել :
2. Ո՞ր կաթողիկոսի նախաձեռնությամբ և որտեղ է հիմնվել առաջին տպարանը Արևելյան Հայաստանում:
3. Ոսկան Երևանցու ջանքերով ո՞ր գիրքը ամբողջական տարբերակով առաջին անգամ լույս տեսավ հայերեն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական առաջին ամսագիրը «Ազդարար»ն է:
2. Արևելյան Հայաստանում առաջին տպարանը հիմնվել է Էջմիածնում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել և բացատրել, որ Աստվածաշնչի հայերեն ամբողջական տարբերակը լույս է տեսել Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու ջանքերով:
2. Նշել ճիշտ պատասխանը:

«Ազդարարը» լույս է տեսել՝

ա. 1771 թ բ. 1666 թ գ. 1794 թ. դ. 1763 թ.

Դաս 11 «Գիտությունը և արվեստը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է համարվում XVII- XIX դդ առաջին կեսի նշանավոր պատմաբան, ով ընդհանրացրել է հայ ժողովրդի անցած ամբողջ պատմական ուղին:
2. Որտե՞ղ է հիմնադրվել Մխիթարյան միաբանությունը:

3. XVII- XIX դդ առաջին կեսի մշակույթի ի՞նչ նշանավոր նկարիչներ գիտեք:
4. Ռուս գրողներից ո՞ւմ ստեղծագործությունն է առաջին անգամ բեմադրվել Երևանում 1827 թ.:
5. Ո՞վ է հայկական խազերը վերծանել և համապատասխանեցրել եվրոպական նոտաներին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. XVII- XIX դդ առաջին կեսի նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ ներկայացրեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը:
2. Մխիթարյան միաբանությունը հիմնադրվել է Վենետիկում:
3. Ա. Գրիբոյեդովի <<Խելքից պատուհասը>> պիեսը առաջին անգամ հեղինակի ներկայությամբ բեմադրվել է Երևանում 1827 թ:
4. Հայկական խազերը վերծանել և եվրոպական նոտաներին է համապատասխանեցրել Համբարձում Լիմոնճյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել տվյալ ժամանակաշրջանի առնվազն 2 նշանավոր նկարչի անուն. Ստեփան Ներսիսյան, Հովհաննես Այվազովսկի, Հակոբ և Աղաթոն Հովնաթանյան:
2. Արժևորել Համբարձում Լիմոնճյանի ավանդը հայ հոգևոր երաժշտության պահպանման ու զարգացման գործում:

Դաս 12 «Արևելյան Հայաստանի դրությունը» /«Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր կայսեր կողմից են իրականացվել ազատական բարեփոխումները Ռուսաստանում:
2. Ո՞ր թվականին սկսեց գործել Թիֆլիս –Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին:
3. Արդյունաբերության ո՞ր ճյուղերն էին զարգացած Արևելյան Հայաստանում:
4. Հայ խոշոր արդյունաբերողներից ո՞ւմ գիտեք:
5. Քանի՞ հայկական գործող դպրոց փակվեց ցարի հրամանով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ազատական բարեփոխումները Ռուսաստանում իրականացվել են Ալեքսանդր II կայսրի կողմից:
2. Թիֆլիս –Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին գործարկվել է 1899 թ. :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել Արևելյան Հայաստանում արդյունաբերության հիմնական ճյուղերից առնվազն երկուսը. պղնձի արտադրություն, աղի արտադրություն, կոնյակի և օղու արտադրություն:

2. Թվարկել հայ խոշոր նշանավոր արդյունաբերողների անուններ՝ Ալեքսանդր Մանթաշյան, Միքայել Արամյանց:
3. Նշել ճիշտ պատասխանը:

Ցարի հրամանով փակվեցին շուրջ՝

ա. 500 դպրոց բ. 100 դպրոց գ. 30 դպրոց դ. 300 դպրոց

4. Քարտեզի վրա ցույց տալ Արևմտյան և Արևելյան Հայաստանը:

Դաս 13 «Արևմտահայերի դրությունը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ սկզբունքով էր առաջնորդվում թուրքական կառավարությունը երկրի հայկական տարածքները նոր վարչական բաժանումների ենթարկելիս:
2. Քանի՞ նահանգի բաժանվեց Արևմտյան Հայաստանը՝ ըստ Օսմանյան կառավարության հերթական վարչական բաժանման:
3. Թվարկել Արևմտյան Հայաստանի նահանգներից մի քանիսը:
4. Ի՞նչ սոցիալ-տնտեսական ճնշումների էր ենթարկվում արևմտահայ բնակչությունը:
5. Արևմտյան Հայաստանի ո՞ր քաղաքներն էին արհեստագործության և արդյունաբերական կենտրոններ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի վարչական բաժանում իրականացնելիս այնպես էր անում, որ ոչ մի տեղ հայերը մեծամասնություն չկազմեին:
2. Արևմտյան Հայաստանը՝ ըստ Օսմանյան կառավարության հերթական վարչական բաժանման, բաղկացած էր վեց նահանգներից:
3. Վանը, Խարբերդը Արևմտյան Հայաստանի արհեստագործության, և արդյունաբերական խոշոր կենտրոններ էին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Օսմանյան կայսրությունում արևմտահայ բնակչությունը ենթարկվում էր, կողոպուտի, հալածանքների, վճարում էր ծանր հարկեր:
2. Թվարկել Արևմտյան Հայաստանի նահանգներից առնվազն երկուսը. Էրզրումի (Կարին), Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի նահանգներ:
3. Քարտեզի վրա ցույց տալ Վանը, Խարբերդը:

Գլուխ 5 /«Զանգակ»/
Հայ ազգային - հասարակական շարժումները:
/2 ժամ/

Դաս 14. Հասարակական - քաղաքական միտքը /Զանգակ/
Թեմա 6 § 1. Հայ հասարակական միտք /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր են Պահպանողական հոսանքի նշանավոր գործիչները:
2. Ո՞րն էր պահպանողականների կարևոր գաղափարը:
3. Ովքե՞ր են ազատականները:
4. Ի՞նչ գաղափարներ էին արտահայտում ազատական հոսանքի գործիչներ Ստեփանոս Նազարյանցը, Միքայել Նալբանդյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Պահպանողական հոսանքի գործիչներն են Գաբրիել Այվազովսկին, Ծերենցը, Հովհաննես Չամուռչյանը և ուրիշներ:(Թվարկել առնվազն 2 գործչի անուն:)
2. Ազատականները հին նահապետական բարքերի և հատկապես՝ հայոց եկեղեցու քննադատներն էին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ հայ ժողովրդի ապագան պահպանողականները տեսնում էին ազգային արժեքների պահպանության մեջ. պահպանել Հայոց եկեղեցու դերը, ազգի ավանդույթները, հին հայերենը՝ գրաբարը:(Նշել առնվազն 2 դրույթ:)
2. Առանձնացնել, որ ազատական հոսանքի գործիչներից Ստեփանոս Նազարյանցը գտնում էր, որ հայ ժողովուրդը պետք է ունենար լուսավորյալ, առաջադիմական դպրոց, իսկ Միքայել Նալբանդյանը քարոզում էր արմատական հեղափոխական գաղափարների միջոցով հասնել հայ ժողովրդի ազատագրությանը: (Նշել այս գործիչներից առնվազն մեկի գաղափարները:)

Դաս 15.Արևմտահայերի ազգային կյանքի երկու նշանավոր շրջադարձերը /Զանգակ/
§ 2. Արևմտահայերի ազգային Սահմանադրությունը: Զեյթունի 1862թվականի ապստամբությունը /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր են «Ազգային սահմանադրություն» հեղինակները:
2. Ի՞նչ արդյունք ունեցավ «Ազգային սահմանադրություն»ը:
3. Որտե՞ղ է գտնվում Զեյթունը, ի՞նչ կարգավիճակ ուներ և որքան էր հայերի թիվը Զեյթունում:
4. Ե՞րբ է տեղի ունեցել Զեյթունի ապստամբությունը և ովքե՞ր են ղեկավարել ապստամբությունը:
5. Ի՞նչ նշանակություն ունեցավ Զեյթունի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը Զեյթունի համար:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. «Ազգային սահմանադրություն» անվանումը ստացած կանոնադրության հեղինակներն են Ն.Ռուսինյանը, Գ. Օտյանը և ուրիշներ: (Նշել հեղինակներից առնվազն մեկին:)
2. Զեյթունը գտնվում է Լեռնային Կիլիկիայում, ուներ կիսաանկախ վիճակ, այնտեղ բնակվում էին 40000 հայեր:
3. Զեյթունի ապստամբությունը տեղի է ունեցել.
   Նշել ճիշտ պատասխանը.

1/ 1860թ. 2/ 1862թ. 3/ 1861թ. 4/ 1863թ.

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել Զեյթունի ապստամբության ղեկավար գործիչներին Մկրտիչ Յաղուբյանը, վարդապետ Մահտեսի Գրիգորը, Մարկոս Թաշճյանը և ուրիշներ: (Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)
2. Բացատրել, որ ըստ «Ազգային սահմանադրության» ՝ արևմտահայերի համար ստեղծվում էին որոշ հնարավորություններ՝ մշակույթի, դպրոցի և ազգային կրոնական կապերի զարգացման համար:
3. Արտահայտել դիրքորոշում Զեյթունի ապստամբության նշանակության վերաբերյալ:

Գլուխ 6 «Զանգակ»
Հայկական Հարցի միջազգայնացումը:
/2 ժամ/

Դաս 16. Ռուս-թուրքական 1877 – 1878 թթ. պատերազմը և Հայաստանը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է սկսվել ռուս - թուրքական պատերազմը:
2. Ի՞նչ նպատակ ուներ Ռուսաստանը՝ ռուս - թուրքական պատերազմում:
3. Ո՞ր ջոկատի հրամանատարն էր Արշակ Տեր – Ղուկասովը:
4.Ի՞նչ գիտեք Բայազետի հերոսական պաշտպանության մասին:
5.Ռաֆֆու, ո՞ր վեպում է արտացոլվում Բայազետի հերոսական պաշտպանությունը:
6. Ի՞նչ մասնակցություն ունեին հայերը ռուս - թուրքական պատերազմին: Նշել մեկ կամ երկու փաստ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Ռուս - թուրքական պատերազմը սկսվել է 1877 թվականին:
2. Արշակ Տեր-Ղուկասովը Երևանյան ջոկատի հրամանատարն էր, ում գլխավորությամբ ազատագրվեցին Բայազետը և Ալաշկերտը:
3. Բայազետի հերոսական պաշտպանությունը իր գեղարվեստական արտացոլումն է գտել Ռաֆֆու «Խենթը» վեպում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Ռուսաստանը՝ ռուս - թուրքական պատերազմում ձգտում էր վերականգնել իր հեղինակությունը, Բալկանյան ժողովուրդների պայքարը օգտագործելով տիրել Արևմտյան Հայաստանին :
2. Բացատրել, որ. երբ 1877թ. հունիսին թուրքերը պաշարում են Բայազետի բերդը, նրանց համառ դիմադրում էին հայ կամավորները և փոքրաթիվ ռուսական զորաջոկատը: Սամսոն Տեր-Պողոսյանը քրդի շորերով ծպտված անցնում է թուրքերի մոտով և օգնություն խնդրում Տեր-Ղուկասովից, որի արդյունքում 23 օր Բայազետում պաշտպանվածները փրկվում են: (Նշել առնվազն 2 փաստ:)

3. Թվարկել, որ ռուս - թուրքական պատերազմի ժամանակ հայերը զինվորագրվում էին ռուսական բանակին, պարեն մատակարարում զորքերին, ստեղծում կամավորական ջոկատներ և այլն(Նշել առնվազն 2 փաստ։)

§ 17. Հայկական Հարցի միջազգայնացումը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է կնքվել Սան Ստեֆանոյի պայմանագիրը, ում միջև և որ հոդվածն էր վերաբերում հայերին:
2. Ե՞րբ է հրավիրվել Բեռլինի վեհաժողովը և ո՞ր հոդվածն էր վերաբերում հայերին:
3. Ո՞վ էր ղեկավարում հայկական պատվիրակությունը.
4. Ի՞նչ գիտեք Հայկական Հարցի միջազգայնացման մասին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սան Ստեֆանոյի պայմանգիրը կնքվել է 1878 թ. փետրվարի 19-ին, Ռուսաստանի և Թուրքիայի միջև, հայերին վերաբերում էր 16 - րդ հոդվածը:
2. Բեռլինի վեհաժողովը հրավիրվել է 1878թ. հունիսին և հայերին վերաբերող հոդվածը 61-րդն էր:
3. Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Մկրտիչ Խրիմյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կատարել համապատասխանեցում:
   ա.1878թ. հունիս բ.1878թ. հունվար գ.1878թ. հուլիս դ.1878թ. փետրվար
   ա. 29 -րդ բ. 61 - րդ գ. 36 - րդ դ. 61 - րդ

Պայմանագիրը	Տարեթիվը	Հոդվածը
Սան Ստեֆանոյի		
Բեռլինի վեհաժողովի		

2. Բացատրել, որ Մեծ տերությունների կողմից Հայկական հարցի միջազգայնացումը իրականում ոչինչ չտվեց հայությանը և Հայկական հարցից ազատվելու համար սուլթան Աբդուլ Համիդը վճռեց Հայկական հարցը լուծել հայերի զանգվածային բնաջնջման միջոցով:

Գլուխ VII

Ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-90-ական թվականներին.

/5-ժամ/

§ 18. Ազատագրական խմբակները և կազմակերպությունները/Զանգակ

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ ստեղծվեցին գաղտնի խմբակներ և կազմակերպություններ:
2. Արևելյան Հայաստանում որտե՞ղ հիմնվեցին առաջին գաղտնի ազատագրական խմբակները:
3. Որտե՞ղ և ե՞րբ է հիմնադրվել <<Պաշտպան Հայրենյաց>>կազմակերպությունը:
4. Ո՞ր խմբակները ստեղծվեցին 1870-ական թվականներին Վանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

-

1. Արևելյան Հայաստանում առաջին գաղտնի խմբակները ստեղծվել են Ալեքսանդրապոլում և Ղարաքիլիսայում.
2. «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը ստեղծվել է 1881 թ. Կարինում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել, որ 1870-1880 ական թվականներին ստեղծվեցին գաղտնի խմբակներ և կազմակերպություններ, որոնց նպատակը ազատագրական պայքարի կազմակերպումն ու Հայաստանի ազատագրումն էր:
2. 1870-ական թվականներին սկզբին Վանում ստեղծվեցին «Միություն ի փրկություն» և «Սև խաչ» գաղտնի խմբակները.
3. Լրացնել աղյուսակը.

Խմբակի ստեղծման վայր	Խմբակի անվանում

§19. Հայ ազգային կուսակցությունները. «Զանգակ»,

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որտե՞ղ և երբ ստեղծվեց հայ ազգային առաջին՝ «Արմենական» կուսակցությունը:
2. Որտե՞ղ և երբ՞ ստեղծվեց ազգային երկրորդ՝ «Հնչակյան» կուսակցությունը:
3. Որտե՞ղ և երբ ստեղծվեց ազգային երրորդ՝«Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը:
4. Ի՞նչ գիտեք երեք կուսակցությունների ծրագրերի կարևորագույն դրույթների մասին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ ազգային առաջին՝ «Արմենական» կուսակցությունը ստեղծվել է 1885 թվականին, Վան քաղաքում:
2. Հայ ազգային երկրորդ՝ «Հնչակյան» կուսակցությունը ստեղծվել է 1887 թվականին, Ժնև քաղաքում .
3. Հայ ազգային երրորդ՝ «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը ստեղծվել է 1890 թ., Թիֆլիս քաղաքում .

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Լրացնել աղյուսակը.

Կուսակցություններ	Տարեթիվ	Հիմնադրման վայր
		Վան
	1887 թ.	
ՀՅԴ		

2. Բացատրել, որ երեք ազգային կուսակցությունների «Արմենական, Հնչակյան , ՀՅԴ» ծրագրերի կարևորոգույն դրույթը Արևմտյան Հայաստանը թուրքական բռնապետությունից ազատագրելն էր:

§20. Հայդուկային շարժում. «Զանգակ»,

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որ՞ոնք էին հայդուկային շարժման առաջացման պատճառները:
2. Ովքեր էին հայդուկները և ինչ՞ հայտնի հայդուկապետեր գիտեք:
3. Ո՞վ էր առաջին հայդուկապետը:
4. Ինչու՞ էր ժողովուրդը Սերոբին կոչում Աղբյուր Սերոբ.
5. Ո՞վ վրեժխնդիր եղավ Աղբյուր Սերոբի սպանության համար.

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Առաջին հայդուկը Արաբոն էր:
2. Ժողովուրդը Սերոբին անվանում էր Աղբյուր Սերոբ, այսինքն՝ «կյանք պարգևող»:
3. Աղբյուր Սերոբի սպանության համար վրեժխնդիր եղավ Անդրանիկը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հայդուկային շարժման առաջացման պատճառը Արևմտահայության քաղաքական ,սոցիալ-տնտեսական ծանր վիճակն էր:
2. Բացատրել, որ հայդուկները վրեժառուներ էին , որոնք բարձրանում էին լեռները փոքրիկ խմբերով և պայքարում էին օսմանյան իշխանությունների դեմ:
3. Թվարկել հայտնի հայդուկապետերի. Արաբո, Աղբյուր Սերոբ, Գևորգ Չավուշ, Անդրանիկ, Հրայր Դժոխք և այլն. (Թվարկել առնվազն երեք հայդուկապետի անուն:)

§ Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը. Դիմադրական մարտերը 1890-ական թվականներին. (Հայոց ցեղասպանության սկիզբը-էջ 92-94)

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ էր Աբդուլ Համիդը
2. Որն՞ է Աբդուլ Համիդի ծրագրի նպատակը:
3. Ե՞րբ հրապարակվեց «Մայիսյան բարենորոգումներ ծրագիրը»:
4. Ի՞նչ հետևանք ունեցավ «Մայիսյան բարենորոգումներ ծրագիրը»:
5. Ե՞րբ սկսվեցին Արևմտահայության զանգվածային կոտորածները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Աբդուլ Համիդը Օսմանյան կասրության սուլթանն էր:
2. Աբդուլ Համիդը 1891թ. ստեղծեց հատուկ հեծելազնդերը, որոնք ստացան «Համիդիե» անվանումը:
3. «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը» հրապարակվեց 1895 թ մայիսի 11ին:
4. Արևմտահայերի զանգվածային կոտորածները սկսվեցին 1894 թվականին.

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Բացատրել, որ Աբդուլ Համիդի ծրագրի նպատակը Արևմտահայության բնաջնջումն էր, նա առաջնորդվում էր. «Չկա հայ ժողովուրդ, չկա և Հայկական Հարց» ուղիով:
2. Բացատրել, որ «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը» ոչ միայն չիրագործվեց, այլ կազմակերպվեցին հայերի զանգվածային կոտորածներ:

Դաս 21. Հայոց Ցեղասպանության սկիզբը. Դիմադրական մարտերը 1890-ական թվականներին(Սասունի և Զեյթունի հերոսամարտերը, Պաշտպանական կռիվները Վանում) Թեմա 9. Դաս-2. Արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը. (Սասունի 1894 թ. ապստամբությունը, Զեյթունի 1895 թ ապստամբությունը, Ինքնապաշտպանական մարտերը)

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար՝

1. Ո՞րտեղ էր գտնվում Սասունը և որքան էր հայ բնակչության թիվը:
2. Երբ՞ է տեղի ունեցել Սասունի ապստամբությունը:
3. Երբ՞ է տեղի ունեցել Զեյթունի ինքնապաշտպանական հերոսամարտը:
4. Երբ՞ է տեղի ունեցել Վանի ինքապաշտպանությունը:
5. Ինքապաշտպանական մարտերի ինչ ղեկավար գործիչներ գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սասունը գտնվում էր Բիթլիսի նահանգում և ուներ 35 հազար հայ բնակչություն:
2. Սասունի ապստամբությունը տեղի է ունեցել 1894 թ.:
3. Զեյթունի ինքնապաշտպանությունը տեղի է ունեցել 1895 թ:
4. Վանի ինքապաշտպանությունը տեղի է ունեցել 1896 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Լրացնել աղյուսակը՝ ժամանակագրական հաջորդականությամբ.

Ինքնապաշտպանական մարտերի անվանումները	*Տարեթիվ*

2. Թվարկել ինքնապաշտպանական մարտերի ղեկավար գործիչների. Մեծն Մուրադ, Գևորգ Չավուշ , Հրայր, Գ. Աղասի. (Թվարկել առնվազն երկու գործչի անուն։)

Գլուխ 8. Ազգային շարժումների ծավալումը 20-րդ դարասկզբին
/3 ժամ/

Դաս 22. Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է տեղի ունեցել Առաքելոց վանքի կռիվը և ո՞վ էր այն ղեկավարում:
2. Ինչո՞ւ հայդուկները հեռացան Առաքելոց վանքից։
3. Ֆիդայական շարժման նշանավոր ի՞նչ գործիչներ գիտեք:
4. Ո՞ր վայրերում են տեղի ունեցել ինքնապաշտպանական մարտեր:
5. Ե՞րբ և ո՞ր կռվում զոհվեց Գևորգ Չավուշը։

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Առաքելոց վանքի կռիվը տեղի է ունեցել 1901 թ. նոյեմբերին և այն ղեկավարում էր Անդրանիկ Օզանյանը:
2. Գևորգ Չավուշը զոհվեց 1907 թ. մայիսի 27-ին Սուլուխ գյուղի մոտ տեղի ունեցած կռվում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Առաքելոց վանքում պաշարված հայդուկները նոյեմբերի 27ի գիշերը հեռացան վանքից, քանի որ զինամթերքը սպառվում էր:
2. Թվարկել Ֆիդայական շարժման հայտնի գործիչների. Անդրանիկ, Աղբյուր Սերոբ, Գևորգ Չավուշ, Կայծակ Առաքել, Հրայր Դժոխք և այլոք։(Թվարկել առնվազն երեք գործչի անուն։)

3. Թվարկել Ինքնապաշտպանական մարտերի վայրերը. Սասուն, Վասպուրական, Մուշ:

Դաս 23. Համազգային պայքարի վերելքը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ էր 20-րդ դարասկզբին Կովկասի կառավարչապետը:
2. Ո՞ր թվականին հաստատվեց Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավվելու մասին օրենքը:
3. Ի՞նչ արձագանք գտավ այդ օրենքը հայության շրջանում:
4. Ե՞րբ սկիզբ առան հայ-թաթարական ընդհարումները
5. Ո՞ր կուսակցությունը գլխավորեց հայերի ինքնապաշտպանական կռիվները և ովքե՞ր աչքի ընկան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 20-րդ դարասկզբին Կովկասի կառավարչապեն էր Գ. Գոլիցինը:
2. Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին օրենքը Նիկոլայ II ցարը հաստատեց 1903 թ. հունիսին:
3. Հայ-թաթարական ընդհարումները սկիզբ առան 1905թ. փետրվարի 6-ին։

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Բացատրել որ Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին օրենքը՝ մեծ վրդովմունք առաջացրեց հայության գրեթե բոլոր խավերի շրջանում և հայության համազգային պայքարը ավարտվեց հաջողությամբ՝ 2 տարի անց հայատյաց օրենքը 1905 թ. օգոստոսին չեղյալ հայտարարվեց։
2. Ցույց տալ, որ ինքնապաշտպանության ղեկավարումն իր ձեռքը վերցրեց ՀՅԴ կուսակցությունը և կռիվներում աչքի ընկան նշանավոր գործիչներ Արմեն Գարոն, Քեռին, Սևքարեցի Սաքոն, Դրոն, Վարդանը և Համազասպը և այլով։ /Նշել առնվազն երկու գործչի անուն/:

Դաս 24 Արևմտահայությունը Առաջին աշխարահամարտի նախօրեին /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ են երիտթուրքերը իրականացրել պետական հեղաշրջում:
2 Որտե՞ղ երիտթուրքերի հեղաշրջումից մեկ տարի անց իրականացվեց հայերի կոտորած
3. Ովքե՞ր էին ղեկավարում Սիս քաղաքի ինքնապաշտպանությունը 1909 թ.:
4. Ո՞ր պատերազմից հետո վերաբացվեց Հայկական հարցը
5. Ե՞րբ է ստորագրվել ռուս-թուրքական համաձայնագիր:
6. Ովքե՞ր ընտրվեցին եվրոպացի տեսուչներ Արևմտյան Հայաստանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Երիտթուրքերի հեղաշրջումը իրականացվել է 1908 թ.:
2. Երիտթուրքերի հեղաշրջումից մեկ տարի անց 1909 թ. Ադանայի նահանգում իրականացվեց հայերի կոտորած:
3. Հայկական Հարցը վերաբացվեց Բալկանյան 1-ին պատերազմից հետո:
4. Ռուս-թուրքական համաձայնագիրը ստորագրվել է 1914 թ. հունվարին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Սիս քաղաքում Ադանայի կոտորածից հետո հայերը դիմեցին ինքնապաշտպանության, որը ղեկավարում էին Ղևոնդ և Գյուտ վարդապետերը:
2. Բացատրել, որ ռուս-թուրքական համաձայնագրից ելնելով Արևմտյան Հայաստանում եվրոպացի տեսուչներ նշանակվեցին Հոֆը և Վեստենենկը:

Գլուխ 9 «Զանգակ»
Հայաստանը և Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին:
/8 ժամ/

§ 25. Համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1.Ե՞րբ է սկսվել Առաջին աշխարհամարտը:
2.Որո՞նք են պատերազմի 2 խոշոր ռազմաքաղաքական խմբավորումները:
3.Ո՞րն էր Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակը:
4.Ո՞ր իրադարձությունն է համարվում ամենանշանավորը Կովկասյան ճակատում:
5.Ո՞ր քաղաքը 1916 թվականի փետրվարին գրավեցին ռուսները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Առաջին աշխարհամարտը սկսվել է 1914 թ. օգոստոսի 1-ին:
2. Պատերազմի երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումներն են Անտանտը և Եռյակ (մեկ տարի անց՝ Քառյակ) դաշինքը:
3. 1916 թվականի փետրվարին ռուսական բանակը գրավեց Էրզրում քաղաքը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել. որ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակներից էր հայ ժողովրդի բնաջնջումը, նրանց հայրենազրկումը:
2. Բացատրել, որ Կովկասյան ճակատում ամենանշանավոր իրադարձությունը Սարիղամիշի ճակատամարտն էր, որը ավարտվել է ռուսների հաղթանակով:
3. Քարտեզի վրա ցույց տալ Կովկասյան ճակատում պատերազմող երկրները և նշանավոր ճակատամարտերի վայրերը. Ռուսաստանը, Օսմանյան Թուրքիան, Սարիղամիշ և, Էրզրում քաղաքները:

§ 26. Հայ կամավորական շարժումը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր մարմին էր ղեկավարում կամավորական շարժումը:
2. Քանի՞ կամավորական ջոկատներ կազմվեցին 1914 թվականի աշնանը և ովքե՞ր էին ղեկավարում կամավորական ջոկատները:
3. Որքա՞ն էր կազմում կամավորների թիվը 1915 թ.:
4. Քանի՞ հայ կամավորներ զոհվեցին մարտական գործողությունների ընթացքում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները ղեկավարում էր Ազգային բյուրոն:
2. 1915 թվականին կամավորների թիվը հասնում էր 10000-ի:
3. Առաջին աշխարհամարտի ընթացում զոհվել են 800 հայ կամավորներ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել որ 1914 թվականի աշնանը ձևավորվել են կամավորական չորս ջոկատներ, որոնց թիվը հետագայում աճել է:
2. Լրացնել աղյուսակը.

Կամավորական ջոկատները	Հրամանատարները
1 - ին ջոկատ	
2 - րդ ջոկատ	
3 - րդ ջոկատ	
4 - րդ ջոկատ	
5 – րդ ջոկատ	

Դաս 27. Հայոց Մեծ եղեռնը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է տեղի ունեցել Հայոց Մեծ եղեռնը:
2. Ովքե՞ր են Հայոց Մեծ Եղեռնի հիմնական կազմակերպիչները և քանի՞ փուլով է ընթացել հայերի ոչնչացումը:
3. Ի՞նչ նշանավոր մտավորականներ ցեղասպանության զոհ դարձան և որքա՞ն է Մեծ Եղեռնի զոհերի թիվը:
4. Ինչու՞ է ապրիլի 24-ը նշվում որպես Եղեռնի զոհերի հիշատակի օր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց Մեծ եղեռնը տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:
2. Հայոց Մեծ եղեռնը իրագործվել է երեք խոշոր փուլերով:
3. Մեծ Եղեռնին զոհ դարձան Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 մլն հայերից 1,5 մլն հայ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել Հայոց Մեծ Եղեռնի հիմնական կազմակերպիչներին. Թալեաթ փաշա, Էնվեր Փաշա, Ջեմալ փաշա: (Թվարկել առնվազն մեկ կազմակերպչի անուն)
2. Թվարկել Հայոց Մեծ եղեռնի զոհ դարձած նշանավոր մտավորականների. Գ. Զոհրաբ, Ռ. Սևակ, Դ. Վարուժան, Սիամանթո և այլն: (Թվարկել առնվազն 3 մտավորական գործչի անուն)
3. Բացատրել որ ապրիլի 24-ը նշվում է որպես Եղեռնի զոհերի հիշատակի օր, քանի որ այդ օրըԿ.Պոլսում ձերբակալվեցին մեծ թվով մտավորականներ և ազգային գործիչներ:

Դաս 28. 1915 թվականի հերոսամարտերը /Զանգակ/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. 1915 թ. ո՞ր վայրերում են տեղի ունեցել ինքնապաշտպանական մարտեր:
2. Ովքեր էին գլխավորում ինքնապաշտպանական մարտերը:
3. Ո՞ր նշանավոր քաղաքական և պետական գործիչները դատապարտեցին թուրքերի ոճրագործությունը:
4. Սուետիահայերի հերոսական պայքարը որ՞ հայտնի վեպում է իր գեղարվեստական արտացոլումը ստացել:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1915 թ. ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունեցել Վանում, Շապին Կարահիսարում, Սուետիայում, Ուրֆայում և այլ վայրերում: (Թվարկել առնվազն երկու վայրի անուն:)
2. Սուետահայերի հերոսական պայքարը իր արտացոլումն է գտել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել ինքնապաշտպանական մարտերի նշանավոր գործիչներին՝ Մկրտիչ Յոթնեղբարյան, Արամ Մանուկյան, Արմենակ Եկարյան, Ղուկաս Տեռվլեթյան: (Թվարկել առնվազն երկու գործիչի անուն:)

2. Թվարկել թուրքերի ոճրագործությունը դատապարտած նշանավոր քաղաքական և պետական գործիչների անուններ. Հ. Մորգենթաու, Ֆ. Նանսեն, Լեփսիուս, Վ. Բրյուսով, Վ. Վիլսոն, Մ. Գորկի: (Թվարկել առնվազն երկու գործիչի անուն:)
3. Քարտեզի վրա ցույց տալ ինքնապաշտպանական մարտերի վայրերը. Վան, Շապին Կարահիսար, Սուետիա, Ուրֆա: (Ցույց տալ առնվազն բնակավայր::)

Դաս 29. Ազգային քաղաքական կյանքի վերելքը 1917թ <<Զանգակ>>

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ և ի՞նչպես տապալվեց միապետությունը Ռուսաստանում:
2. 1917 թ. մարտին իշխանության ինչ նոր մարմին ստեղծվեց:
3. Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել արևմտահայերի առաջին համագումարը:
4. Ե՞րբ և որտե՞ղ տեղի ունեցավ արևելահայ համագումարը:
5. Ի՞նչ գիտեք սահմանափոխության վերաբերյալ կառավարական ծրագրից:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1917 թ. փետրվարին Ռուսաստանում սկսված հեղափոխությունը տապալեց միապետությունը:
2. 1917 թ մարտին կազմվեց իշխանության նոր մարմին՝Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
3. 1917 թ Երևանում մայիսին հրավիրվեց արևմտահայերի առաջին հանրագումարը:
4. 1917 թ աշնանը Թիֆլիսում տեղի ունեցավ արևելահայերի առաջին հանրագումարը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ ըստ սահմանափոխության հայաբնակ գավառներից պետք է ստեղծվեր երեք նահանգներ, ընդհանուր 64 հազ քառ.կմ ընդհանուր տարածքով:
2. Թվարկել արևմտահայերի և արևելահայերի համագումարներում քննարկված հարցերը և ընդունված որոշումները. արևմտահայերի առաջին հանրագումարը, քննարկեց կրթական, տնտեսական հարցեր, արևելահայերի առաջին հանրագումարը, որոշում ընդունեց Կովկասյան ճակատի պաշտպանության, հայկական զորամասերի ստեղծման և այլ հարցեր: (Թվարկել յուրաքանչյուրից առնվազն մեկը:)

Դաս 30 Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է տեղի ունեցել Հոկտեմբերյան հեղաշրջումը և ո՞ւմ գլխավորությամբ է ստեղծվել նոր կառավարություն:
2. Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ի՞նչ մարմին ստեղծվեց Անդրկովկասում:
3. Ե՞րբ է կնքվել Երզնկայի զինադադարը:
4. Ե՞րբ է կնքվել Բրեստ-Լիտովսկի պայմանագրը և հայերին վերաբերող ինչ կարևոր հոդվածներ ընդունվեցին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Պետրոգրադում 1917 թ. հոկտեմբերի 25–ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում, ստեղծվեց նոր կառավարություն Վ. Լենինի գլխավորությամբ:
2. Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Անդրկովկասում կազմավորվեց նոր գործադիր մարմին՝ `Անդրկովկասյան կոմիսարիատը:
3. Երզնկայի զինադադարը կնքվել է 1917 թ. դեկտեմբերին, արդյունքում փլուզվեց կովկասյան ճակատը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ 1918 թ. մարտին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կարևոր հոդվածներից էր 4-րդ հոդվածը, որի համաձայն Թուրքիային վերադարձվեցին Արևմտյան Հայաստանում գրավված հողերը: Ռուսաստանը պարտավորվում էր հանել Անդրկովկասից իր բոլոր ուժերը:

Դաս 31. Ռազմաքաղաքական իրավիճակը և Անդրկովկասի անկախացումը. «Զանգակ»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ էր ղեկավարում Երևանի ազգային խորհուրդը:
2. Ո՞վ դարձավ առանձին հայկական կորպուսի ընդհանուր հրամանատարը:
3 Ե՞րբ և ո՞ւմ միջև են տեղի ունեցել Տրապիզոնի բանակցությունները:
4. Ովքեր էին հայկական դիվիզիայի և հայկական կորպուսի հրամանատարները

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Երևանի ազգային խորհուրդը ղեկավարում էր Արամ Մանուկյանը:
2. Առանձին կորպուսի ընդհանուր հրամանատար դարձավ Թ. Նազարբեկյանը:
3. Տրապիզոնի բանակցությունները տեղի են ունեցել 1918 թ. մարտին դաշնակից Գերմանիայի, Թուրքիայի և Ռուսատանի միջև:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել հայկական դիվիզիայի և հայկական կորպուսի հրամանատարներին. Թովմաս Նազարբեկյան, Մովսես Սիլիկյան, Անդրանիկ Օզանյան: (Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)

Դաս 32. Մայիսյան փառահեղ հերոսամարտեր. «Զանգակ»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր թվականին Կարսը հանձնվեց թշնամուն:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Սարդարապատի հերոսամարտը և ո՞վ էր ղեկավարում այն:
3. Ի՞նչ գիտեք Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի մասին:
4. Մայիսյան հերոսամարտերի արդյունքում ի՞նչ ստեղծվեց:
5. Թվարկել մայիսյան հերոսամարտերի նշանավոր գործիչների:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1918 թ ապրիլի 12 ին Կարսն առանց դիմադրության հանձնվեց թշնամուն:
2. Սարդարապատի ճակատամարտը տեղի է ունեցել 1918 թ. մայիսի 22ին, այն ղեկավարում էր գնդապետ Դ. Բեկ- Փիրումյանը:
3. Բաշ Ապարանի հերոսամարտը տեղի է ունեցել մայիսի 23-29 -ը և Ղարաքիլիսայի հերոսամարտը տեղի է ունեցել մայիսի 25-30-ը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ մայիսյան հերոսամարտերում (Սարդարապատ, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի) հայ ժողովրդի տարած հաղթանակի արդյունքում հիմք դրվեց Հայաստանի առաջին Հանրապետությանը:
2. Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել մայիսյան հերոսամարտերը:
3. Թվարկել Մայիսյան հերոսամարտերի ժամանակ աչքի ընկած գործիչների. Մովսես Սիլիկյան, Դանիել Բեկ- Փիրումյան, Նիկոլայ Ղորղանյան, Գարեգին Նժդեհ, Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան (Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)

Գլուխ X / «Զանգակ» /
Հայկական մշակույթը նոր շրջանի երկրորդ փուլում
/5 ժամ/

Դաս 33 «Մշակույթի վերելքը: Կրթությունը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որոնք էին մշակույթի վերելքի նախադրյալները նոր շրջանի երկրորդ փուլում:
2. Ո՞ր ժողովուրդների մշակութային ձեռքբերումներն էական ազդեցություն ունեցան արևելահայ և արևմտահայ մշակույթի զարգացման վրա:
3. Ի՞նչ առարկաներ էին հիմնականում դասավանդվում ծխական դպրոցներում:
4. Քանի՞ հայկական դպրոց էր գործում Այսրկովկասում 1914 թ դրությամբ:
5. Ո՞վ է հիմնադրել Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1914 թ Այսրկովկասում գործում էին ավելի քան 400 հայկական դպրոցներ:
2. Էջմիածնի հոգևոր ճեմարանը հինմադրվել է Գևորգ Դ կաթողիկոսի կողմից:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ նոր շրջանի երկրորդ փուլում մշակույթի վերելքի հիմնական նախադրյալներ հանդիսացան գիտության և տեխնիկայի նվաճումները:
2. Բացատրել որ ռուսական մշակութային ձեռքբերումները ազդեցություն են թողել արևելահայ, իսկ ֆրանսիական մշակութային ձեռքբերումները՝ արևմտահայ մշակույթի զարգացման վրա:
3. Թվարկել, որ ծխական դպրոցներում որպես հիմնական առարկաներ դասավանդվում էին կրոն, հայերեն, թվաբանություն, երգեցողություն, վայելչագրություն և այլ առարկաներ: (Թվարկել առնվազն երկուսը:)

Դաս 34 «Գիտության զարգացումը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Նոր շրջանի երկրորդ փուլում բնական գիտությունների ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների անուններ գիտեք:
2. Ո՞ր կարևոր հայտնագործության հեղինակն է Հովհաննես Ադամյանը:
3. Քանի՞ հատոր հայագիտական ժառանգություն է թողել Ղևոնդ Ալիշանը:
4. Ժամանակաշրջանի հայագետներից ո՞վ է թարգմանել հայ միջնադարյան պատմիչների երկերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հովհաննոս Ադամյանը գունավոր հեռուստատեսության հայտնագործության հեղինակն է:
2. Ղևոնդ Ալիշանը թողել է մոտ 45 հատոր գիտական ժառանգություն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Թվարկել ժամանակաշրջանի բնական գիտությունների նշանավոր ներկայացուցիչների. Անդրեաս Արծրունի, Հակոբ Չամչյան, Հովհաննես Ադամյան, Մարգար Առուստամով:(Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)
2. Նշել ճիշտ պատասխանը.

Ժամանակաշրջանի հայագետներից միջնադարյան պատմիչների երկերը թարգմանել է.

1. Ղևոնդ Ալիշանը 3. Մաղաքիա Օրմանյանը
2. Մկրտիչ Էմինը 4. Անտոն Գարագաշյանը

Դաս 35 «Գրականությունը և մամուլը» / «Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Հատկապես ո՞ր քաղաքներում ծաղկում ապրեց հայ մամուլը:
2. Նոր շրջանի երկրորդ փուլում պոեզիայի և արձակի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների անուններ գիտեք:
3. Որտ՞եղ էր լույս տեսնում «Մշակ» թերթը:
4. Ո՞ւմ խմբագրությամբ էր Փարիզում հրատարակվում «Անահիտ» հանդեսը:
5. Որո՞նք էին Հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների պաշտոնական թերթերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. «Մշակ» թերթը լույս էր տեսնում Թիֆլիսում:
2. Փարիզում լույս տեսնող «Անահիտ» հանդեսի խմբագիրը Արշակ Չոբանյանն էր:
3. Հայ մամուլը ծաղկում ապրեց Թիֆլիս և Կ. Պոլիս քաղաքներում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել հայ պոեզիայի և արձակի նշանավոր հեղինակների. Ռաֆֆի, Ռ.Պատկանյան, Մ.Նալբանդյան, Մուրացան, Գ. Զոհրապ, Մ.Մեծարենց, Ալ. Շիրվանզադե, Ավ. Իսահակյան, Հ, Թումանյան, Նար-Դոս, Վ. Տերյան և այլն: (Թվարկել առնվազն երեք գործչի անուն:)
2. Լրացնել աղյուսակը.

Կուսակցություն	Պաշտոնաթերթ
Հնչակյան կուսակցություն	
Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն	

Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Կերպարվեստ: Թատրոն/ /«Զանգակ»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Նոր շրջանի երկրորդ փուլում կերպարվեստի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների անուններ գիտեք:
2. 1868 թ. Կ. Պոլսում ո՞ւմ գլխավորությամբ է հիմնվել թատրոն:
3. Նոր շրջանի երկրորդ փուլում հայ թատրոնի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների անուններ գիտեք:
4. Ո՞վ է կերտել Խաչատուր Աբովյանի հուշարձանը, որը համարվում է նոր շրջանի հայ կերպարվեստի կոթողային քանդակ :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1868 թ. Կ. Պոլսում Հակոբ Վարդովյանի գլխավորությամբ հիմնվել է թատրոն, նա համարվում է հայ և թուրքական թատրոնի հիմնադիրը:
2. Խաչատուր Աբովյանի հուշարձանը կերտել է Անդրեաս Տեր-Մարուքյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել ժամանակաշրջանի կերպարվեսի նշանավոր ներկայացուցիչների. Հովհաննես Այվազովսկի, Գևորգ Բաշինջաղյան, Փանոս Թերլեմեզյան, Մարտիրոս Սարյան, Վարդգես Սուրենյանց և այլոք: (Թվարկել առնվազն երեք գործչի անուն:)
2. Թվարկել ժամանակաշրջանի հայ թատրոնի նշանավոր դերասանների. Պետրոս Ադամյան, Սիրանույշ, Հովհաննես Աբելյան և այլն: (Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)

Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Երաժշտություն: Ճարտարապետություն: Քաղաքաշինություն/ / **«Զանգակ»**/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր թվականին է բեմադրվել Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան:
2. Ո՞ւմ ենք անվանում հայ հանճարեղ երգահան, ով նոտագրել է հայ հոգևոր երգը և փրկել այն աղավաղումներից:
3. Նոր շրջանի երկրորդ փուլում հայ երաժշտական մշակույթի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների անուններ գիտեք:
4. Ո՞ր նշանավոր տոհմի շնորհիվ էր զարգանում արևմտահայ ճարտարապետությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հանճարեղ երգահան Կոմիտասը նոտագրել է հայ հոգևոր երգը և փրկել այն աղավաղումներից:
2. Կ. Պոլսի Պալյանների նշանավոր տոհմի ճարտարապետների շնորհիվ զարգանում էր արևմտահայ ճարտարապետությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Նշել ճիշտ պատասխանը.

Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան բեմադրվել է՝

ա1881 թ գ.. 1868 թ

բ. 1865 թ դ. 1872 թ

Թվարկել ժամանակաշրջանի հայ երաժշտական մշակույթի նշանավոր գործիչների. Կոմիտաս, Տիգրան Չուխաճյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Արմեն Տիգրանյան: (Թվարկել առնվազն երկու գործչի անուն:)

Բաժին III

«Զանգակ»՝ Հայկական գաղութները Նոր շրջանում

/2 ժամ/

Դաս 37. «Զանգակ» ՝ Հիմնական գաղթավայրերը և խոշոր համայնքները:

§ 1,2,3 «Հայկական գաղթօջախները Նոր շրջանում»

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ է «գաղութ»-ը և «համայնքը»:
2. Որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:
3. Որո՞նք են XVII- XX դարի սկզբի խոշոր գաղութները:
4. Որքա՞ն էր կազմում հայերի թիվը Հնդկաստանում և Իրանում:
5. Ո՞րն էր Նոր շրջանում հայկական ամենամեծ գաղթավայրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հնդկաստանում հայերի թիվը կազմում էր մոտ 25,000, իսկ Իրանում՝ մոտ 200,000
2. Նոր դարերում հայկական ամենամեծ գաղթավայրը Ռուսաստանի կայսրությունն էր, որտեղ Արևելյան Հայաստանից դուրս ապրում էր մեկ միլիոն հայ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացարել, որ հայերը հայրենիքից հեռու հայտնվում էին կամավոր կամ բռնի արտագաղթի հետևանքով, որ արտագաղթի պատճառները տարբեր էին՝ անկախ պետականության կորուստ, օտարների դաժան տիրապետություն, ցեղասպանություն, տնտեսական, սոցիալական և քաղաքական ծանր վիճակ, սով, համաճարակներ և այլն / Նշել առնվազն մեկ կամ երկու պատճառ/:
2. Թվարկել XVII- XX դարի սկզբի հիմնական գաղթավայրերը. Իրան, Հնդկաստան, Ռուսաստան, Արևմուտքի զարգացած երկրներ, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս:/ Թվարկել առնվազն երեքը/:
3. Բացատրել, «գաղութ» և «համայք» հասկացությունները. հայերը հոծ զանգվածներով բնակվում էին տարբեր քաղաքներում, ավաններում, գյուղերում կամ հիմնում էին նոր բնակավայրեր: Դրանք կոչվում էին հայկական համայնք: Յուրաքանչյուր պետությունում ձևավորված համայնքը ընդունված է անվանել գաղութ:

Դաս 38. «Զանգակ» Գաղթավայրերի դերը հայապահպանության գործում:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին ազգային կյանքի կազմակերպման հիմնախնդիրները:
2. Ի՞նչ որոշակի իրավունքներ էին ձգտում ստանալ հայերը ազգային կյանքի կազմակերպման համար:
3. Նոր դարերում ի՞նչ դեր ուներ Հայ առաքելական եկեղեցին գաղթավայրերում:
4. Ո՞վ էր ստեղծել Հայկական բարեգործական ընդհանուր միությունը /ՀԲԸՄ-ն/:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Գաղթավայրերի հայերը, ելնելով տվյալ երկրի հասարակական զարգացման պայմաններից և պետության վարած քաղաքականությունից, ձգտում էին ստանալ ազգային կյանքի կազմակերպման համար որոշակի իրավունքներ:
2. Եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի կողմից Եգիպտոսում հիմնվեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որը գործում է մինչև այսօր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ գաղթավայրերում ծնված սերունդներին հայեցի դաստիարակություն տալու, ազգային ինքնությունը պահպանելու և Հայաստանից հեռու գտնվելու համար անհրաժեշտ էր ունենալ ազգային եկեղեցի, դպրոց, համայքի գործերը տնօրինող ազգային մարմիններ և գործիչներ / նշի մեկ կամ երկու փաստ/:
2. Բացատրել, որ գաղթավայրերի հայերը ձգտում էին ստանալ ազգային կյանքի կազմակերպման համար որոշակի իրավունքներ. օրինակ՝ Ռուսաստանյան կայսրության մի շարք հայկական համայնքներ ունեին ազգային սովորույթներով գործող դատարան, օգտվում էին առևտրական և այլ արտոնություններից: /ներկայացնել առնվազն մեկ փաստ/:
3. Արժևորել հայ առաքելական եկեղեցու հայապահպան դերը բոլոր գաղթավայրերում: Հայոց եկեղեցին միակ համահայկական կառույցն էր, որի շուրջը հավաքվում էր տեղի հայ բնակչությունը և Հայոց եկեղեցին ազգային կրթության և մշակույթի պահպանման և զարգացման գործում առանցքային դերակատարություն ուներ: